



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»  
կազմակերպության նախագահ պարոն Ա. Սաքունցին

Ձեր 22.05.2019 թ. թիվ Ե/22.05/351 գրության

Հարգելի պարոն Սաքունց

Տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 04.10.2012 թ. թիվ 1392-Ն որոշմամբ Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի ջրամատակարարման համակարգի վերանորոգման նպատակով հատկացված է եղել 14 628 000 /տասնչորս միլիոն վեց հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամ: Վերը նշված որոշման համաձայն շինարարական աշխատանքների գնումը նախատեսված էր իրականացնել ԲԸԱՀ /բանակցային ընթացակարգ առանց հայտարարության/ գնման ձևի ընթացակարգով:

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներով, շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր կնքելու նպատակով հրավեր /առաջարկ/ է ներկայացվել «Վ.Ն.Ս.Շին» ՍՊԸ շինարարական կազմակերպությանը, որը սահմանված կարգով և ժամկետներում արձագանքել է, ներկայացնելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն և համապատասխան գնային առաջարկ՝ կից ներկայացնելով առաջարկված գնի հաշվարկը, որն էլ հիմք է հանդիսացել պայմանագրային գինը որոշելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.02.2013թ. թիվ 130-Ն որոշմամբ համապատասխան լրացումներ ու փոփոխություններ են կատարվել 04.10.2012 թ. թիվ 1392-Ն որոշման մեջ, «Վ.Ն.Ս.Շին» ՍՊԸ-ի հետ 20.11.2012թ. կնքված ՀՀԼՍ ԱՇՁԲ4-12/1-

2.23 պայմանագրի կատարման ժամկետը՝ համաձայն 23.12.2012թ.կնքված փոփոխության համաձայնագրի, սահմանվել է 28.06.2013թ.:

Միաժամանակ հայտնում եմ, որ շինարարական աշխատանքները ավարտվել են պայմանագրով սահմանված ժամկետներում և վճարումները իրականացվել են ըստ մարզպետարան ներկայացված կատարողական ակտերի՝ պայմանագրային գնի սահմաններում:

Կից ներկայացնում եմ ֆինանսական փաստաթղթերի պատճենները:

Առդիր՝ հինգ էջ:

Հարգանքով՝

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ